State of California-Health and Human Services Agency
Department of Health Care Services
P.O. Box 989009, West Sacramento, CA 95798-9850

TOBY DOUGLAS
Director

EDMUND G. BROWN JR.
Governor

Ծանուցում
Որոշում «Community-Based Adult Services»-ի (CBAS) իրավասության վերաբերյալ

Հարգելի

Մենք Ձեզ ուղարկում ենք այս նամակը, որպեսզի տեղեկացնենք, որ Դուք ***իրավասու*** եք ճանաչվել «Community-Based Adult Services»-ի (CBAS) համար: CBAS-ի միջոցով «Medi-Cal»-ի իրավասու անդամները կարող են մեկ տեղից՝ կենտրոնացված, մասնագիտացված բուժքույրական խնամք, սոցիալական ծառայություններ, բուժումներ, անձնական խնամք, ընտանեկան/խնամողի վերապատրաստում և աջակցություն, սնունդ, փոխադրման և բժշկական գործի կառավարման ծառայություններ ստանալ:

CBAS-ը սկսելու է գործել 2012 թ. մարտի 1-ից: Քանի որ «Department of Health Care Services»-ը հաշտության համաձայնություն է կայացրել «*Darling, et al. v. Douglas, et al.*» գործով, «Adult Day Health Care»-ն (ADHC) ավարտվելու է 2012 թ. փետրվարի 29-ին, և հաջորդ օրը սկսվելու է CBAS-ը: Հաշտության համաձայնությունը կարող եք առցանց կարդալ http://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/ADHC/ADHC.aspx հասցեում:

Ի՞նչ պետք է ես անեմ, որպեսզի սկսեմ CBAS ստանալ

- Եթե Դուք **ներկայումս** ADHC-ի կենտրոն ***եք հաճախում***, հարկավոր է Ձեր կենտրոնին հարցնել, թե արդյոք նրանք պատրաստվում են CBAS-ի սպասարկող դառնալ:
- Եթե Դուք **ներկայումս** ADHC-ի կենտրոն ***չեք հաճախում***, ապա կարող եք զանգահարել «California Department of Aging» (CDA) ՝ (916) 419-7545 հեռախոսահամարով, և պարզել, թե CBAS-ի որ կենտրոնները Դուք կկարողանաք հաճախել:

Ի՞նչ անել, եթե ADHC-ի իմ կենտրոնը չի նախատեսում CBAS-ի սպասարկող դառնալ, կամ եթե ես ցանկանում եմ CBAS-ի մեկ այլ սպասարկող ընտրել

- 2012 թ. փետրվարի 15-ից CDA-ի կայքում՝ http://www.aging.ca.gov/programs/adhc/adhc_centers.asp հասցեով, կգտնվի CBAS-ի այն սպասարկողների ցուցակը, որոնց Դուք կարող եք այցելել:

կամ

- 2012 թ. փետրվարի 15-ից սկսած Դուք կարող եք զանգահարել «California Department of Aging» (CDA)՝ (916) 419-7545 հեռախոսահամարով և պարզել, թե CBAS-ի որ կենտրոնները Դուք կկարողանաք հաճախել:

Ես կշարունակե՞մ ստանալ այն նույն ծառայությունները, որոնք ես ստանում եմ ADHC-ի իմ ներկա կենտրոնում

Այո: CBAS ծառայությունները լինելու են այն նույն ծառայությունները, որոնք Դուք ստանում եք ADHC-ի Ձեր կենտրոնում: Դուք կարող եք CBAS-ի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալ առցանց՝ այցելելով http://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/ADHC/ADHC.aspx:

Ու՞մ զանգահարեմ հարցերի դեպքում

Հարցերի կամ մտահոգությունների դեպքում խնդրում ենք զանգահարել Disability Rights California՝ (800) 776-5746, TDD/TTY (800) 719-5798 հեռախոսահամարով, կամ կարող եք գրել՝

Disability Rights California
1330 Broadway, Suite 500
Oakland, CA 94612
Darling@disabilityrightsca.org